ԵՎՐՈՊԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ

ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՈՒՆՆԵՐԻ
ԵՎ ԱՆՎՏԱԳՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՏԵՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ
Եվրոպական հարևանության քաղաքականության իրականացումը Հայաստանում
2013թ. առաջընթաց և առաջարկվող գործողություններ

Կից ներկայացվող փաստաթուղթ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ, ԽՈՐՀՐԴԻՆ, ԵՎՐՈՊԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ և ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՄԱՏԵՂ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հարևանությունը խաչմերուկներում
Եվրոպական հարևանության քաղաքականության իրականացումը 2013 թվականին

Հայերեն Հայերեն

1. Ընդհանուր գնահատում և առաջարկություններ

Տվյալ փաստաթուղթը ներկայացնում է 2013 թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը ԵՄ-Հայաստան Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) Գործողությունների ծրագրում գրանցած առաջընթացը, թեև հաշվետու ժամանակահատվածից դուրս կատարված իրադարձությունները հաշվի են առնվում ըստ անհաժեշտության: Այս փաստաթուղթը Հայաստանի քաղաքական և տնտեսական իրավիճակի ընդհանուր ակնարկը չէ: Տարածաշրջանում և տարբեր հատվածներում տեղի ունեցող գործընթացների վերաբերյալ տեղեկություններ ստանալու համար ընթերցողները պետք է ուսումնասիրեն Արևելյան Գործընկերության ծրագրի կատարողականի մասին զեկույցը:

2013 թվականի ընթացքում Եվրամիության և ՀՀ կառավարության միջև տեղի են ունեցել բազմաթիվ քաղաքական շփումներ: ՀՀ արտաքին գործերի նախարարը մի քանի անգամ այցելել է ԵՄ կառույցներ, ինչպես նաև մի շարք այցեր են իրականացվել Երևան ԵՄ-ն բարձրաստիճան պաշտոնյաների կողմից: Այդ թվում Եվրամիության ընդլայնման և եվրոպական հարևանության հարցերով հանձնակատար Շտեֆան Ֆյուլեի կողմից հուլիսիսին Երևան կատարած այցը և ԵՄ կրթության, մշակույթի եւ երիտասարդության հարցերով հանձնակատար Անդրուլա Վասիլիուի հետ սեպտեմբերին համատեղ այցը: Հարավային Կովկասի և Վրաստանի ճգնաժամի հարցերով ԵՄ հատուկ ներկայացուցիչը նույնպես մի քանի անգամ այցելել է Հայաստան: Նույն տարվա դեկտեմբերին Բրյուսելում տեղի է ունեցել ԵՄ-Հայաստան Համագործակցության խորհրդի նիստը:

Հուլիսին ԵՄ-ը և Հայաստանը ավարտեցին Ասոցացման համաձայնագրի վերաբերյալ բանակցությունները, այդ թվում Խորը և համապարփակ ազատ առևտրի գոտու (ԱՀ/ԽՀԱԱԳ) մասով, սակայն չկարողացան շարունակել նախաստորագրման գործընթացը, քանի որ Հայաստանը որոշում կայացրեց միանալ Ռուսաստանի, Ղազախստանի եւ Բելառուսի միջեւ ստեղծված Մաքսային միությանը: 2013 թվականի նոյեմբերին Վիլնյուսում կայացած Արևելյան Գործընկերության գագաթաժողովի ժամանակ ԵՄ-ն ու Հայաստանը հանդես եկան համատեղ հայտարարությամբ՝ երկկողմ հարաբերությունների ապագա ձևաչափի ձևավորման վերբերյալ: 2013 թվականին վավերացվել են Մուտքի արտոնագրերի դյուրացման և Ռեադմիսիայի մասին համաձայնագրերը, որոնք ուժի մեջ են մտել 2014 թվականի հունվարի 1-ին:

2012 թվականին գրանցած առաջնթացի շնորհիվ Արևելյան Գործընկերության ինտեգրման և համագործակցության ծրագրի շրջանակում Հայաստանին լրացուցիչ 25 միլիոն եվրո է հատկացվել մարդու իրավունքների և խորը ժողովրդավարության ոլորտում իրականացվող բարեփոխումները շարունակելու նպատակով: Այդ միջոցները պետք է ուղղվեն քաղծառայության

ոլորտում իրականացվող բարեփոխումներին և հակառոռուպցիոն ջանքերին, ինչպես նաև սահմանների կառավարման և միգրացիոն ոլորտներին: ԵՄ ծրագրերում Հայաստանի մասնակցության մասին Շրջանակային Համաձայնության արձանագրության ստորագրման գործընթացը զարգացում է ապրել: Դեկտեմբերի 11-ին Եվրոպական Խորհրդարանը տվել է իր համաձայնությունը: Ներկայումս Խորհուրդը պետք է Արձայանգրության ստորագրման վերաբերյալ որոշում կայացնի:

Մինչ Հայաստանը շարունակում է լուծել մարդու իրավունքներին և հիմնարար ազատություններին առնչվող խնդիրները՝ անհրաշեժշտ է իրականացնել հետագա աշխատանքները օրենսդրության իրականացման և կիրառկման ուղղությամբ: 2013 թվականի փետրվարի 18-ին կայացած նախագահական ընտրությունները գնահատվել են ընդհանուր առմամբ լավ կազմակերպված և հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի դրսևորմամբ: Միևնույն ժամանակ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) կողմից պատրաստված եզրափակիչ/ավարտական զեկույցում նշվում է, որ լուրջ խնդիրներ են արձանագրվել քվեարկության ընթացքի և ձայների հաշվարկի մասով և անհագնստություն է արտահարվել ընտրական գործընթացի արդարության վերաբերյալ: Դատահիրավական համակարգի բարեփոխումների գործընթացը շարունակվել է, սակայն ոլորտի հաղեպ հասարակականվստահությունը չի ավելացել, իսկ կոռուպցիայի դեմ պայքարում, ոստիկանության և դատական համակարգերում համոզիչ արդյունքներ չեն արձանագրվել: Քրեական օրենսգիրքը դեռևս չի համապատասխանում ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոնվենցիայի դրույթներին: Այդ են վկայում ոստիկանությունում կալանավորման ժամանակ կիրառվող խոշտանգումների և վատ վերաբերմունքի մասին բազմաթիվ հայտարարությունները: Մարդու իրավունքների պաշտպանը, ով հանդիսանում է ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոնվենցիայի Կամընտիր Արձանագրությամբ նախատեսված ազգային կանխարգելիչ մեխանիզմ, չունի համապատասխան ռեսուրսներ իր առաջադրանքները արդյունավետ կատարելու համար: Ավելացել են քաղաքացիական հասարակության կազմակերպությունների դեմ հարձակումները, որոնք պատշաճ կերպով չեն քննվել իշխանությունների կողմից:

Հայաստանը շարունակում է ողջամիտ մակրոտնտեսական քաղաքականություն վարել և իրականացնել կառուցվածքային բարեփոխումներ: Առաջընթաց է գրանցվել մակրոտնտեսական քաղաքականության, աղքատության նվազեցման և սոցիալական համախմբվածության ոլորտներում Գործողության ծրագրի նպատակների իրականացման ուղղությամբ: ՀՆԱ-ի մեկ տարվա իրական աճից հետո 2013 թվականի ընթացքում տնտեսական ակտիվությունն էապես նվազել էր և Հայաստանում կտրուկ գնաճ էր գրանցվել, որն առաջացել էր անբարենպաստ եղանակի և Ռուսաստանի կողմից հաստատված գազի գների կտրուկ աճի

հետևանքով: Այնուհանձերձ, Հայաստանի արտաքին և պետական պարտքը մնացել էր կայուն: Հետագա աճը և տնտեսական զարգացումը կախված կլինեն բիզնես մթնոլորտի բարելավման, հարկաբյուջետային կայուն ամրապնդման և գլոբալ տնտեսական իրավիճակից:

Հայաստանը դեռևս խիստ կախվածություն ունի ներմուծվող առաջնային էներգիայի աղբյուրներից. միակ առաջնային էներգիան արտադրվում է երկրի հիդրոէլեկտակայաններում և Մեծամորի ատոմակայանում: Մեծամորի ատոմակայանի մաշվածությունը թույլ չի տալիս այն բարենորոգել և հասցնել ատոմային անվտանգության միջազգային չափանիշներին: ԵՄ-ի առաջնային նպատակն է կայանի պատեհաժամ փակումը և գործարկման դադարեցումը: Սակայն, պաշտոնական Երևանը որոշում է կայացրել ատոմակայանի փակումը 2016 թ-ից տեղափոխել 2026 թվական, երբ հնարավոր կլինի անցում կատարել այլընտրանքնային աղբյուրների: Ֆուկուշիմայի վթարից հետո Մեծամորի ատոմակայանի անվտանգ շահագործումը ապահովելու նպատակով՝ Հայաստանն Ատոմային էներգիայի միջազգային գործակալության հետ համատեղ անվտնագության և ռիսկի կամավոր գնահատումներ (սթրեսային թեսթեր) իրականացրեց: ԵՄ-ը օգտագործեց Ատոմյաին անվտանգության համագործակցության իր գործիքը, որպեսզի աջակցի Հայաստանին թեսթերի շարունակականությունը ապահովելու նպատակով: Այդ մասին զեկույցը կհրապարակվի 2014 թվականի առաջին կեսին:

2013 թվականին Մինսկի խմբի ձևաչափում Ղարաբաղյան կարգավորման հարցը դուրս չի եկել փոկուղուց: Հայաստանում (փետրվարին) և Ադրբեջանում (հոկտեմբերին) անցկացված ընտրություններն ազդեցին առաջընթացի վրա: Սպառազինությունների մրցավազքը և ռազմատենչ հռետորաբանությունը, ինչպես նաև Ղարաբաղում հնարավոր չվերթների վերսկսաման ուղղությամբ լարված իրավիճակը չնպաստեցին կարգավորման ուղիների որոնման համար կառուցողական մթնոլորտի հաստամանը: Հույս է ներշնչում այն, որ 2012 թվականի հունվարից հետո երկու երկրների նախագահներն առաջին անգամ հանդիպեցին 2013 թվականի նոյեմբերին ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահների միջնորդությամբ Վիեննայում կայացած գագաթնաժողովում, որտեղ համաձայնության եկան խթանել խաղաղ կարգավորմանն ուղղված բանակցությունները և մոտ ապագայում ևս մեկ հանդիպում կազմակերպել: Չնայած դրական միտումների, 2014 թվականների հունվար և փետրվար ամիսներին երկու երկրների միջև շփման գծում բռնության թեժացում գրանցվեց: ԵՄ-ը շարունակում էր աջակցել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների աշխատանքին՝ ուղղված կայուն կարգավորմանը: 2013 թվականին Հարավային Կովկասում և Վրաստանում ճգնաժամի ԵՄ-ի հատուկ ներկայացուցիչը չորս անգամ այցելել է տարածաշրջան և ջանքեր գործադրել լարված դրությունը մեղմելու և հակամարտության վերափոխման հնարավորությունները ուսումնասիրելու նպատակով: ԵՄ-ը նաև ֆինանսապես է

աջակցել խաղաղությանը միտված գործողություններին «Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման համար Եվրոպական գործընկերություն» ծրագրի շրջանակներում՝ համախմբելով հակամարտող երկրների շահագրգիռ կողմերին:

ԵՄ-ի կողմից խթանվող առանց նախապայմանների հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման իրական առաջընթաց չի գրանցվել: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ դեկտեմբերին Երևանում կայացած Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության արտաքին գործերի նախարարների հանդիպման շրջանակներում երկու արտաքին գործերի նախարարների միջև տետ-ա-տետ հանդիպում է տեղի ունեցել:

Նախագահական ընտրություններից առաջ Հայաստանը հասցեագրել է 2012 թվականի համար ԵՀՔ զեկույցում ներգրավված հիմնական առաջարկությունները: ՀՀ Նախագահի աշխատակազմի կողմից աշխատանքային խումբ է, որն առաջարկություններ է ներկայացնում ի պատասխան ԵԱՀԿ/ ԺՀՄԻԳ-ի ընտրություններին առնչվող առաջարկություններին: ԵԱՀԿ/ ԺՀՄԻԳ-ը ընդգծել է ընդգրկուն ընտրական բարեփոխումների մեկնարկի անհրաժեշտությունը: Հետագա աշխատանքները իրականացվել են փետրվար ամսին կայացած ընտրություններից հետո և օրենսդրական փոփոխությունները պետք է հաստատվեն աշխատանքային խմբի, ՀՀ արդարադատության նախարարությանը և վերջում ընդունվեն ՀՀ Ազգային ժողովի կողմից: Հայաստանը խորհրդակցական մարմին է ստեղծել մինչև 2014 թվականի ապրիլ ամիսը սահմանադրական բարեփոխումներ պատրաստելու նպատակով: Գործողություններ են իրականացվել բարձր մակարդակում կոռուպցիայի վերացման ուղղությամբ, սակայն էթիկայի հանձնաժողովը դեռևս արդյունավետ չէ: Շարունակվում է “կարգավորող գիլյոտին” ծրագրի մշակումը, ինչի միջոցով ակնկալվում է նվազեցնել վարչարարության բեռը և կոռուպցիայի համար հնարավորությունները: Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության իրականացումը վերահսկող նոր միջգերատեսչական հանձնաժողով է ստեղծվել: Հաստատվել են “Այլընտրանքային զինվորական ծառայության մասին” ՀՀ օրենքում և «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների ապահովման մասին ՀՀ օրենքում” փոփոխությունները, որոնցում, սակայն, բողոքների համար մեխանիզմ նախատեսված չէ: Սահմանափակ փոփոխություններ են գրանցվել պետական կառավարման ոլորտում իրականացվող բարեփոխումների ուղղությամբ: Որոշ միջոցառումներ են ձեռնարկվել դատական համակարգում բարեփոխումներ իրականացնելու և ԵՄ օրենսդրությանը մոտարկման խթանման ուղղությամբ:

2014 թվականին ԵՀՔ գործողության ծրագրի կայուն իրականացման նպատակով և այս տարվա զեկույցի հիման վրա Հայաստանին առաջարկվում է՝

- Համագործակցել և պաշտպանել քաղաքացիական հասարակությունը; հետաքննել իրավապաշտպանների վրա իրագործվող հարձակումներին ու ահաբեկում ները և ապահովել, որպեսզի իրավախախտները ենթարկվեն պատասխանատվության:
- Իրականացնել ԵԱՀԿ/ ԺՀՄԻԳ-ի կողմից ընտրությունների վերաբերյալ արված առաջարկությունները, մասնավորապես բոլոր թեկնածուների համար ապահովել “խաղի հավասար կանոններ” և խուսափել ընտրական նպատակներով վարչական ռեսուրսների օգտագործումից: Ավելին, բազմակարծություն ապահովել հեռարձակող ԶԼՄ-ներում:
- Լիարժեք հետաքննել 2008թ. մարտի ընդհարումների ընթացքում տեղի ունեցած մահվան դեպքերը և ոստիկանական կալանքում վատ վերաբերմունքի մասին հայտարարությունները:
- Վերջնական տեսքի բերել «Խղճի և կրոնական ազատությունների մասին օրենքի» նախագիծը:
- Հարգանք ապահովել խտրականության բացառման սկզբունքի նկատմամբ և խտրականության դեմ համապարփակ օրենսդրություն ընդունել:
- Շարունակել պետական կառավարման ոլորտի բարեփոխումը, մասնավորապես ուժեղացնել կոռուպցիայի կանխարգելումը և կոռուպցիայի դեմ պայքարը:
- Ուժեղացնել դատական համակարգի և իրավապահ մարմիններում բարեփոխումները:
- Շարունակել աշխատանքները Մեծամորի ատոմակայանի ամենա վաղ հնարավոր փակման ուղղությամբ, ինչպես նաև արագացնել էներգաարդյունավետության վերաբերյալ ճանապարհային քարտեզի իրականացման և թիրախային 30% վերականգնողական էներգիայի ստացմանն ուղղված քայլերը:
- Ջանքեր գործադրել Մադրիդյան սկզբունքների վերաբերյալ համաձայնության ձեռքբերման ուղղությամբ՝ համաձայն Մինսկի խմբի շրջանակներում Հայաստանի և Ադրբեջանի նախագահների կողմից ստանձնած պարտավորությունների; խուսափել այն գործողություններից կամ հայտարարություններից, որոնք կարող են լարել իրավիճակը և վնասել խաղաղ գործընթացին:
- Աջակցել հակամարտության կարգավորման հարցում առաջընթացին նպաստող միջավայրի ձևավորմանը, խթանել և սատարել խաղաղությանը միտված գործողությունները:
- ԵՄ ներկայացուցիչների համար ապահովել անարգել մուտք Լեռնային Ղարաբաղ և հարակից շրջաններ՝ Մինսկի խմբի ջանքերին համապատասխան հակամարտության կարգավորմանն ուղղված գործողություններին աջակցելու նպատակով:

1. Քաղաքական երկխոսություն և բարեփոխում

Չնայած ընտրական գործընթացում առաջընթաց է գրանցվել՝ խախտումները շարունակվում են: 2013 թվականի փետրվարի 18-ին Հայաստանում անցկացվել են նախագահական **ընտրությունները**, որոնք, ըստ գնահատականների, ընդհանուր առմամբ համապատասխանել են միջազգային չափանիշներին: Միևնույն ժամանակ, ԵԱՀԿ/ ԺՀՄԻԳ-ի դիտորդական առաքելությունը նշել է պետական կառավարման կողմից անկողմնակալության բացակայությունը, վարչական ռեսուրսների չարաշահումը և ընտրողների վրա ճնշում գործադրելու դեպքերը: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները նույնպես նշել են վարչական ռեսուրսների չարաշահման հանգամանքը, ընտրակաշառք բաժանելու փաստերը, ընտրական ցուցակներում անճշտությունները և իրավապահ մարմինների ներկայացուցիչների անգործությունը: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության վերջնական զեկույցում նշվել է, որ քվեարկության և ձայների հաշվարկի հետ կապված լուրջ խնդիրներ են գրանցվել և ընտրական գործընթացի ամբողջականությունը մտահոգության առարկա է դարձել: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելությունը առաջարկությունների ցանկ է ներկայացրել ՀՀ իշխանության, քաղաքական կուսակցությունների և քաղաքացիական հասարակության ուշադրությանը: Այս առաջարկությունները հարկավոր է դիտարկել հաշվի առնելով ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից նախկինում արվածները, մասնավորապես 2012 թվականին խորհրդարանական ընտրությունների մասով եզրափակիչ զեկույցում, և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի Ընտրական օրենսգրքի վերաբերյալ միասնական եզրակացության մեջ ընդգրկված առաջարկությունների հետ համատեղ: Ի ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի կողմից արված առաջարկությունների, ՀՀ Նախագահի աշխատակազմի կողմից գլխավորած ընտրական օրենսդրության բարեփոխումների աշխատանքային խումբը ներկայկարել է իր առաջարկությունները: ԵՄ-ը աջակցություն է տրամադրել ընտրական օրենսգրքի բարեփոխման գործընթացին:

2013 թվականին մայիսի 13-ին Երևանում անցկացվեցին տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները: Եվրոպայի խորհրդի տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսի պատվիրակության նախնական եզրակացությունների համաձայն, ընտրությունները տեխնիկապես լավ կազմակերպված էին, բարելավվել է ձայների հաշվարկի գործընթացը, սակայն գրանցվել են խախտումներ, այդ թվում՝ բազմակի քվեարկություն: Տեղական դիտորդները (ՀԿ-ների ներկայացուցիչները) նշել են, որ ընտրական գործընթացում մասնակիցների վրա, այդ թվում՝ լրագրողների, հոգեբանական և ֆիզիկական ճնշում է գործադրվել:

ՀՀ Նախագահը **խորհրդակցական մարմին** է ստեղծել՝ մինչև 2014 թվականի ապրիլ ամիսը սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի մշակելու

նպատակով: Այս մարմինը խորհրդակցել է Վենետիկի հանձնաժողովի հետ և ՀՀ Նախագահի համար մի շարք առաջարկություններ է նախապատրաստում:

Ինչ վերաբերում է **դատական համակարգի անկախությանը**, ապա 2012-2016 թվականների համար դատական համակարգերի բարեփոխումների ռազմավարությունն իրականացվում է, սակայն համակարգի և դրա ամբողջականության հանդեպ հասարակական անվստահությունը բարձր է և դրան անհրաժեշտ է ուշադրություն դարձնել: Դատական համակարգի հզորացման նպատակով օրենքում մի շարք փոփոխություններ կատարելու առաջարկություններ են արվել: Քրեական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերի նախագծերը, ինչպես նաև վարչական դատավարության օրենսգիրքը ներկայացվել են միջկառավարական քննարկմանը: 2014 թվականի հունվարին կգործի Արդարադատության նոր ակադեմիան:

Չնայած ԵՄ աջակցությամբ արձանագրված արդարադատության ոլորտի շարունակական առաջընթացին՝ մտահոգիչ է գործադիրի ազդեցությունը դատական համակարգի կադրային քաղաքականության վրա: Անհրաժեշտ է իրականացնել **արդարադատության մատչելիության** ապահովման բարեփոխումներ, այդ թվում՝ դատական գործընթացի որակի բարձրացման և անձնակազմի կարողությունների զարգացման ուղղությամբ: Բարեփոխումներ են անհրաժեշտ նաև քաղաքացիական իրավունքները խթանման ու պաշտպանության և օրենքի գերակայության սկզբունքի թույլ ու կամայական կիրառումը կանխելու ուղղությամբ:

Ինչ վերաբերում է **անպատժելիությանը**, ապա որևէ զարգացում չի գրանցվել 2008 թվականի մարտին անցկացրած նախագահական ընտրություններից հետո տեղի ունեցած ընդհարումների հետևանքով մահվան դեպքերի հետաքննման հարցում: Մայիսին, ՀՀ Ազգային Ժողովը դեմ քվեարկեց խորհրդարանում մարտի 1-ի դեպքերը ուսումնասիրող ժամանակավոր ստեղծելու նախաձեռնությանը:

Հիմնականում Կառավարությունը հարգում է **միավորվելու ազատությունը**, սակայն 2009 թվականից սկսած "Հասարակական կազմակերպությունների մասին" ՀՀ օրենքում փոփոխություններ մտցնելու փորձերը հաջողություն չեն գրանցել: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար իրավական շրջանակների հայեցակարգի վերաբերյալ որոշումը Կառավարությունը կկայացնի երկու զուգահեռ գործող աշխատանքային խմբերի տված առաջարկությունների հիման վրա, որոնք կարծես թե իրարամերժ դրույթներ են ներկայացրել: Գործող օրենքը իրավունք է տալիս քաղաքացիներին, բացառությամբ զինվորական և իրավապահ մարմինների անձնակազմի, ձևավորել ասոցիացիաներ, այդ թվում՝ քաղաքական կուսակցություններ և արհմիություններ:

ՀՀ Սահմանադրությունը և օրենքը սահմանում են **հավաքների ազատությունը**: Սակայն, 2013 թվականի զեկույցներում աճել է քաղաքական ակտիվիստների և իրավապաշտպանների դեմ բռնությունների, ինչպես նաև խաղաղ ցուցարարների նկատմամբ ոտնձգությունների և չափից ավելի ճնշումների վերաբերյալ արձանագրությունների թիվը: ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը նշել է Ոստիկանության կողմից իրականացված խախտումները, սակայն ոչ մի իրավախախտող դեռևս դատական պատասխանատվության չի ենթարկվել: Նախագահական ընտրությունների արշավի ընթացքում զեկուցվել է, որ տեղական իշխանությունները թույլ չեն տալիս քաղծառայողներին այցելել ընդդիմության հանրահավաքները՝ միևնույն ժամանակ նպաստելով իրենց մասնակցությունը իշխանամետ հանրահավաքներին:

Մամուլի և խոսքի ազատության վերաբեյալ, Կառավարության և պետական պաշտոնյաների հանդեպ քննադատությունը հիմնականում հաղուրժվում է: Այդուհանդերձ, մի շարք հարցեր, մասնավորապես նրանք, որոնք հակասում են հայ ինքնության առանցքային սկզբունքներին, շարունակում են տաբու մնալ: Իրավապաշտպաններ, լրագրողներ և այլ անձինք, ովքեր փոքրամասնության տեսակետներ ունեն վիճահարույց խնդիրների շուրջ, ինչպիսիք են Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը և չարաշահումները զինված ուժերում, երբեմն ենթարկվում են ահաբեկումների, ոտնձգությունների, սպառնալիքների և բռնությունների: Խտրականության և ահաբեկման ու բռնության նմանատիպ դեպքերը սովորական բնույթ են կրում լեսբուհի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր կամ ինտերսեքս (ԼԳԲՏԻ) հանդիսացող անձանց հանդեպ:

Մամուլի անկախությունը մնում է անբավարար, որևէ առաջընթաց չի գրանցվել հեռարձակման ոլորտում բազմակարծության ապահովման ուղղությամբ: Չնայած թվայնացման վերջնաժամկետը հետաձգվել էր՝ մամուլի բազմակարծության ոլորտում որևէ այլ փոփոխություն չի գրանցվել: Թվայնացման գործընթացի վերաբերյալ նախկին մտահոգությունները կապված ազատ հաճախականությունների բաշխման հետ չեն նվազել: Միևնույն ժամանակ, բարելավվել է ինտերնետի հասանելիությունը և, օրենսդրական ու իրավական դաշտից հեռացվել են մուտքի և բովանդակության կառավարման խոչընդոտները:

Հայաստանը 94 տեղն է զբաղեցրել է Թրանսփերենսի Ինթերնեյշնլ (ԹԻ) կազմակերպության 2013 թվականի «Կոռուպցիայի ընկալման ինդեքսի» 177 պետությունների վարկանիշում: 2012 թվականի հետ համեմատ վարկանիշը մի փոքր բարձրացել է, սակայն շարունակում է ցածր մնալ: Հայաստանը **հակակոռուպցիոն** ռազմավարություն չի մշակել, ու չնայաց Կառավարությունը նշում է, թե ծրագրեր է կազմել հատվածային միջոցառումների համար և նախատեսում է համապարփակ ռազմավարություն մշակել՝ որևէ հստակ զարգացումներ չեն արձանագրվել: Հայկական հասարակության մեջ

քաղաքական ուժերի և տնտեսական շահերի սերտաճում է նկատվում, ինչը հանգեցնում է որոշումների կայացման անթափանցիկությանը: Շատ քիչ գործողություններ են ձեռնարկվել բարձր ատյաններում կոռուպցիայի դեմ պայքարի համար: Էթիկայի հանձնաժողովը դեռ արդյունավետ չի գործում և ուժեղացման կարիք ունի: Կառավարությունը նույնպես շարունակում է մշակել "կարգավորող գիլյոտին" և էլեկտրոնային հասարակություն ծրագիրը, որի միջոցով ակնկալվում է նվազեցնել վարչարարության բեռը և սահմանափակել կոռուպցիայի դռսևորման ռիսկերը: Իրավական դրույթներն առկա են, բայց կոռուպցիայի դեմ պայքարի արդյունքները, այդ թվում՝ ոստիկանության և դատական համակարգերում, դեռևս համոզիչ չեն: Չափազանց կարևոր է իրական առաջընթաց գրանցել այս ոլորտում, ինչը թույլ կտա սոցիալական և տնտեսական ոլորտներում բարեփոխումների առաջընթաց արձանագրել:

Ինչ վերաբերում է **անվտանգության և իրավապահ մարմինների գործունեությանը**, ապա փետրվարին Կառավարությունը հաստատել է 2013-2014 թթ ոստիկանության բարեփոխման ծրագիրը և ժամանակացույցը: Սեպտեմբերին հայտարարվել է նոր քննչական մարմնի ստեղծման մասին, որի գործառույթները և դերը դեռ հստակեցված չեն:

Զինված և անվտանգության ուժերի քաղաքացիական վերհսկողության վերաբերյալ մտահոգություններ են առաջացնում զինված ուժերում ոչ մարտական պայմաններում արձանագրված կասկածելի մահվան դեպքերը, ինչպես նաև ծաղրուծանակի և զինակոչիկների նկատմամբ վատ վերաբերմունքի դեպքերը:

Մարդու այլ իրավունքները և հիմնարար ազատությունները

ՄԱԿ-ի **Համընդհանուր պարբերական դիտարկմանը** համաձայն փետրվարին Կառավարությունը ներկայացրել է միջանկյալ զեկույցը: Սեպտեմբերին Հայաստանը նաև ստորագրել է Միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին միջազգային կոնվենցիան:

Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող Գործողությունների ծրագիրը չի հաստատվել 2012 թվականի նոյեմբերից: Փետրվարին, ՀՀ ազգային անվտնագության խորհրդի ներքո ստեղծվել է Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության դրույթների և ռազմավարության գործողությունների ծրագրի իրականացման հարցերով միջգերատեսչական հանձնաժողով, որի աշխատանքները կմեկնարկեն փաստաթղթի հաստատումից հետո:

Խոշտանգումների իրավական սահմանումը դեռևս չի ներառում պետական պաշտոնյաների ուղիղ կամ անուղղակի ներգրավվածությամբ կատարված հանցագործությունները, դրա սահմանումը չի պահանջում որևէ կոնկրետ շարժառիթ, և այսպիսով այն չի համապատասխանում Խոշտանգումների դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի դրույթներին: Գրանցվել են ոստիկանության կողմից խոստովանություններ ստանալու նպատակով կատարված խոշտանգումների և վատ վերաբերմունքի մասին բազմաթիվ և հետևողական հայտարարություններ, սակայն նման դեպքերի ուսումնասիրության համար կալանավայրերում չի գործում ոչ մի տեսակի բողոքների անկախ մեխանիզմ: Իրավապահ մարմինները չեն կարողանում ապահովել բոլոր կալանավորների պաշտպանության հիմնարար երաշխիքները, այդ թվում՝ իրավաբանի, բժշկի պատեհաժամ հասանելիությունը և ընտանիքի անդամների հետ շփման իրավունքը: 2013 թվականին Մարդու իրավունքների պաշտպանին, որը նշանակվել է որպես ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոնվենցիայի Կամընտիր Արձանագրությամբ նախատեսված ազգային կանխարգելիչ մեխանիզմ, համապատասխան ռեսուրսներ են տրամադրվել բյուջեից իր առաջադրանքները արդյունավետ կատարելու նպատակով:

2014 թվականին ենթադրվում է ընդունել **“Պրոբացիոն ծառայության ներդրման մասին”** ՀՀ օրենքի նախագիծը, քրեական դատավարության օրենսգրքի վերանայումից հետո: Քրեակատարողական հաստատություններում իրավիճակը շարունակում է մնալ վատ՝ տիրում են անբավարար առողջապահական պայմաններ, հաստատությունները գերբնակեցված են և անձնակազմի թիվը անբավարար է: Ակնկալվում է քրեակատարողական նոր հաստատությունների կառուցում՝ համաձայն ԵՄ չափանիշների: ԵՄ-ը ծրագրում է աջակցել քրեակատարողական բարեփոխումներին՝ քրեակատարողական հաստատությունների պայմանների բարելավման նպատակով:

Ըստ հունիսին ընդունված “**Այլընտրանքային զինվորական ծառայության** մասին” ՀՀ օրենքին փոփոխությունների, ստեղծվել է երկու տեսակի այլընտրանքային ծառայություն՝ զենքի հետ կապ չունեցող 30 ամիս տևողությամբ այլընտրանքային զինվորական ծառայություն և զինված ուժերի հետ կապ չունեցող 36 ամիս տևողությամբ այլընտրանքային աշխատանքային ծառայություն: Սա հնարավորություն է տալիս այն քաղաքացիներին, որոնց կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է ռազմական ստորաբաժանումներում զինվորական ծառայությունը, որոնք պայմանական-վաղաժամկետ ազատվել են, որոնց դատավճիռը պայմանականորեն չի կիրառվել՝ դիմել այլընտրանքային ծառայություն անցնելու համար: Սույն օրենքը թույլ չի տալիս անհատներին ընտրել այլընտրանքային ծառայություն, եթե իրենք սկսել են զինվորական ծառայությունը:

«**Խղճի ազատության եւ կրոնական կազմակերպությունների** մասին» ՀՀ օրենքի ընդունման վերաբերյալ ոչ մի էական առաջընթաց չի գրանցվել: Շարունակվում են ավելանալ աշխատավայրերում, հասարակությունում և մամուլում փոքրամասնությունների կրոնական խմբերի դեմ խտրականության դեպքերը:

Հայաստանում դեռևս շատ ցածր է կանանց քաղաքական ներկայացուցչությունը: «Կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը (որում բացակայում է բողոքների համար նախատեսված մեխանիզմը) կարող է ընդունվել ՀՀ Ազգային Ժողովի կողմից մայիսին: Սակայն, օգոստոս և սեպտեմբեր ամիսներին որոշ խմբեր բողոքարկում էին օրենքով սահմանված գենդերի հասկացությունը, ինչը ուղեկցվում էր **կանանց իրավունքների** պաշտպանների նկատմամբ ահաբեկչական գործողություններով: Նոյեմբերի 22-ին, ՀՀ Վարչապետին կից կանանց հարցերով խորհուրդը վերահաստատեց Կառավարության կողմից ստանձնված պարտավորությունը Գենդերային հավասարությանը և կանանց դեմ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի նկատմամբ: Խորհուրդը նաև ստանձնեց ապահովել նոր օրենքի արդյունավետ իրականացումը:

Գենդերային և ընտանեկան բռությունների տարածվածությունն անհագստացնող է: Դեռ բացակայում են բռնության զոհերի պաշտպանության և իրավախախտներին պատժելու համար նախատեսված համապատասխան իրավական միջոցառումները, քանի որ փետրվարին Կառավարությունը մերժել է “Ընտանեկան բռնության մասին” ՀՀ օրենքը, որի նախագիծը մի քանի տարվա աշխատանքների արդյունք էր: Փոխարենը, գործադիրը առաջարկել է նշված միջոցառումները փոփոխությունների տեսքով ներառել այլ օրենսդրական ակտերում, ինչը քննադատության արժանացավ տեղական քաղաքացիական հասարակության շրջանում: Ոչ մի էական առաջընթաց չի արձանագրվել սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների ուղղությամբ: Հայաստանն առաջիններից է աշխարհում արական սեռի նորածինների բարձր մակարդակով (100 աղջիկների նկատմամբ 114/115 տղա է ծնվում, գերազանցապես կենտրոնական Հայաստանում):

2013 թվականի հուլիսի **Երեխաների իրավունքների** գծով ՄԱԿ-ի հանձնաժողովի Եզրափակիչ Դիտարկումներում նշվել է, որ այս ոլորտում գրանցվել է գործող օրենքների և կանոնակարգերի անբավարար իրականացում և կիրառկում: 2013-2016 թթ Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային ծրագրի և այլ ռազմավարությունների իրականացման համար ֆինանսական միջոցներ չկան, և դրանց իրականացումը կախված է միջազգային կազմակերպությունների ֆինանսավորումից: Ավելի շատ ջանքեր են անհրաշեժտ նվազեցնելու անապահով ընտանիքների և հաշմանդամ երեխաների ինստիտուցիոնալացումը:

Անչափահասների գործերով օրենսդրությունը դեռևս չի համապատասխանում միջազգային չափանիշներին:

Ներկայումս իրականացվում է ինտեգրված սոցիալական ծառայությունների ներմուծման բարեփոխումը, որի նպատակն է կրճատել աղքատությունը և պաշտպանության ու սոցիալական ծառայություններ ապահովել առավել խոցելի խավի ընտանիքների համար, սակայն չի ենթադրում երեխաների պաշտպանություն: Անհրաժեշտ են հետագա ջանքեր, որոնք կապահովեն միջազգային գործառույթների ներմուծումը և կիրառումը՝ հաշմանդամության ընկալման բժշկական մոդելից սոցիալակին անցում կատարելու համար: **Սոցիալական իրավունքների** Եվրոպական հանձնաժողովի 2013 թվականի եզրակացություններում ասված է, որ Հայաստանը չի համապատասխանում Եվրոպական սոցիալական կանոնադրությանը, մասնավորապես աշխատանքային խտրականության վերացմանն ուղղված միջոցառումներով և աշխատանքի դադարեցման դեպքում պաշտպանության ապահովման գծով: Այստեղ դեռևս բացակայում է այն օրենսդրական կամ քաղաքական փաստաթուղթը, համաձայն որի հաշմանդամները արդյունավետ պաշտպանված են աշխատանքի, բնակարանի, տրանսպորտի, հաղորդակցման, մշակութային և ժամանցային հարցերում դռռնորած ցանկացած խտրականությունից: 2010 թվականին Հայաստանը ստանձնել է այս խնդրի լուծմանն ուղղված հանձնառությունը՝ միանալով Հաշմանդամների իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիային:

Ինչ վերաբերում է **աշխատանքային իրավունքներին և արհմիություններին**, ապա այս ոլորտում առկա են սահմանափակումներ գործադուլների իրավունքների մասով, ինչպես նաև կան սահմանափակումներ արհմիություններին միանալու որոշ խմբերի համար (օրինակ, իրավապահ մարմինների մասնագետների):

Խտրականության դեմ չի ընդունվել ոչ մի համապարփակ օրենսդրություն: Մարդու իրավունքների պաշտպանի նախաձեռնությունը օրենքի նախագիծ մշակելու ուղղությամբ (ԵՄ խորհրդատվականի օգնությամբ) բախվել է մի շարք քաղաքացիական և կրոնական կազմակերպությունների ուժգին ընդդիմությանը, որոնք մեղադրեցին Մարդու իրավունքների պաշտպանին ավանդական ընտանեկան արժեքների ոչնչացման մեջ: Նախագիծը չներկայացվեց ՀՀ արդարադատության նախարարությանը: Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության խնդիրները շարունակում են խիստ վիճահարույց մնալ: Իշխանությունների արձագանքը ԼԳԲՏ անձանց դեմ խտրականության հարցում շարունակում է մնալ անբավարար և դանդաղ: Հարձակումները դատապարտելու և պատժի ենթարկելու փորձերը ձախողվել են:

Հայաստանը նախագահել է Եվրոպայի Խորհրդի Նախարարների Հանձնաժողովները և հոկտեմբերին բարձր մակարդակով համաժողով էր

կազմակերպել, որը նվիրված էր Եվրոպայում ռասիզմի, քսենոֆոբիայի և անհանդուրժողության դեմ պայքարին:

Կառավարությունը չի կիրառել Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի որոշումները՝ **սեփականության իրավունքի** և Հայաստանում սեփականության իրավունքի պետական հարկադիր օտարման վերաբերյալ:

Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների ոլորտում, Ազգային փոքրամասնությունների հարցերով համակարգման խորհուրդի համար նախատեսված պետական ֆինանսավորումը երկու անգամ ավելացել է, սակայն, ֆինանսական միջոցները հավասար բաշխվել են համայնքների միջև՝ առանց համապատասխան կարիքների կամ չափերի գնահատման:

Կառավարմանն առնչվող այլ հարցեր

Պետական կառավարման բարեփոխումների ոլորտում սահմանափակ առաջընթաց է գրանցվել: Խիստ անվստահություն է նկատվում պետական կառույցների և դրանց ամբողջականության հանդեպ: ՍԻԳՄԱ-ի[1] փորձագետները ներկայացրել են 2012 թվականի դեկտեմբերին մշակված Քաղաքացիական ծառայության հանձնաժողովի քաղաքականության փաստաթղթի վերաբերյալ մանրամասն դիտարկումներ, որոնք ուղղված էին եվրոպական չափանիշներին համապատասխանող նոր կամ փոփոխված Քաղաքացիական ծառայության մասին օրենքի մշակմանը:

Կառավարությունը մտադիր է բարձրացնել տեղական կառավարման դերը **տարածաշրջանային զարգացման** ռազմավարության շրջանակներում, այդ թվում ստեղծել Տարածաշրջանային զարգացման հիմնադրամ, որին ԵՄ-ը աջակցություն է տրամադրում: Հայաստանը նաև քննարկումներ է նախաձեռնել հնարավոր ապակենտրոնացման գործընթացի շուրջ, որի շնորհիվ կարելի է կրճատել տեղական կառավարական մարմինների/համայնքների և մարզերի թիվը:

Չնայած նրան, որ Արևելյան գործընկերության **Քաղաքացիական հասարակության** ֆորումի ազգային պլատֆորմը տարվա ընթացքում ակտիվ էր՝ Կառավարության և քաղաքացիական հասարակության միջև երկխոսությունը դեռևս անկանոն է: ԵՄ-ը ուժեղացրեց Հայաստանի քաղաքացիական հասարակությանն ուղղված աջակցությունը՝ բարեփոխումների իրականացման մոնիտորինգի հնարավորությունների զարգացման նպատակով: 2014 թվականի

[1] Կառավարման և ղեկավարման բարելավմանն ուղղված աջակցությունը ԵՄ-ի և ԵԱՀԿ-ի համատեղ նախաձեռնությունն է, որը հիմնականում ֆինանսավորվում է ԵՄ-ի կողմից:

հունվարին Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորումի Հայաստանի ազգային պլատֆորմը քաղաքական դիրքորոշում որդեգրեց:

Համագործակցություն արտաքին և անվտանգության քաղաքականության, տարածաշրջանային և միջազգային խնդիրների, հակամարտությունների կանխարգելման և ճգնաժամի կառավարման ոլորտներում

2013թ. Հայաստանը համապատասխանեցրել է իր քաղաքականությունը ԵՄ ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականության (ԸԱԱՔ) 32 հռչակագրերից 19-ին, որոնց հետ կապված հրավերք է արվել երկրին տրամադրելու օժանդակություն (62-ից 35-ը՝ 2012թ): Ավելին, Հայաստանը արտահայտել է իր պատրաստակամությունը մասնակցելու ԵՄ Ընդհանուր անվտանգության և պաշտպանության քաղաքականության (ԸԱՊՔ) առաքելություններին, սակայն դեռևս չի ներկայացրել պաշտոնական հայտ մեկնարկելու բանակցությունները ԱԸՊՔ տարածքում Շրջանակային մասնակցության համաձայնագրի կնքման շուրջ:

Ինչ վերաբերում է Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը, Մինսկի խմբի մեռյալ կետը շարունակվել է ողջ 2013թ. ընթացքում: Ընտրության ցիկլերը Հայաստանում (փետրվար) և Ադրբեջանում (հոկտեմբեր) իր բացասական ազդեցությունն են ունեցել առաջընթացի վրա: Սպառազինության մրցավազքի շիկացումը և աճող հակամարտության հռետորությունը, ինչպես նաև դեպի Լեռնային Ղարաբաղ հնարավոր թռիչքների շուրջ լարումները խոչընդոտել են կառուցողական մթնոլորտի ձևավորմանը: Նոյեմբերի ամսին արձանագրված խրախուսիչ զարգացումների համատեքստում երկու երկրների նախագահները 2012թ. հունվար ամսից ի վեր առաջին անգամ կրկին հանդիպել են Վիեննայում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդությամբ, որի ժամանակ քննարկվել են խաղաղ գործընթացի առաջիկա քայլերը, և համաձայնություն է ձեռք բերվել նորից հանդիպել ամիսներ անց: Այնուհետև հաջորդել է դեկտեմբերի 5-ին Կիևում կայացած հանդիպումը արտաքին գործերի նախարարների մակարդակում՝ ԵԱՀԿ նախարարների խորհրդի հանդիպման ժամանակ, իսկ Մինսկի խմբի համանախագահները մեկնել են տարածաշրջան դեկտեմբերի 15-19-ը՝ քննարկելու վերջին զարգացումները Լեռնային Ղարաբաղի խաղաղ կարգավորման գործընթացում: Ամեն դեպքում, 2014թ. հունվար և փետրվար ամիսներին իրավիճակը փոփոխվել է, որի արդյունքում ակտիվացել են բռնությունները այս երկու կողմերի միջև հարաբերություններում: ԵՄ-ն շարունակել է օժանդակություն ցուցաբերել ԵԱՀԿ-ի Մինսկի խմբին տևական խնդրի լուծմանն ուղղված վերջինիս ջանքերում: 2013թ. ԵՄ-ի Հարավային Կովկասի և Վրաստանի ճգնաժամի հարցերի հատուկ ներկայացուցիչը չորս անգամ այցելել է տարածաշրջան՝ փորձելու օգնել լարվածության մեղմացման գործընթացին և ուսումնասիրելու հակամարտության տրանսֆորմացիայի

հնարավորությունները: ԵՄ նաև տրամադրել է ֆինանսական օժանդակություն խաղաղաշինության գործողություններին՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ լուծման եվրոպական գործընկերության ծրագրի միջոցով, որի շրջանակներում միավորվում են հակամարտության երկու կողմերը:

Անհրաժեշտ է մեծացնել Մինսկի խմբի գործընթացի ջանքերը՝ մադրիդյան սկզբունքների մասին համաձայնագրի վերջնականացման ուղղությամբ որպես խաղաղության հիմք՝ համաձայն Հայաստանի և Ադրբեջանի նախագահների ստանձնած պարտավորությունների: Երկու կողմերը պետք է ձեռնպահ մնան այնպիսի գործողություններից կամ հայտարարություններից, որոնք էլ ավելի կարող են լարել իրավիճակը և խաթարել խաղաղ գործընթացը, ինչպես նաև պետք է խթանեն այնպիսիս միջավայր, որը հնարավորություն կտա արձանագրել առաջընթաց հակամարտության լուծման գործընթացում, միևնույն ժամանակ խրախուսելով և օժանդակելով խաղաղաշինության գործողություններին: Անհրաժեշտ է ապահովել ԵՄ ներկայացուցիչների անխափան մուտքը Լեռնային Ղարաբաղ և շրջական տարածքներ՝ հակամարտության տրասֆորմացիայի գործողություններին օժանդակելու նպատակով, որոնք կլրացնեն Մինսկի խմբի ջանքերին:

ԵՄ-ն օժանդակել է այնպիսի գործողություններին, որոնք խթանել են վստահությունը և մարդկանց միջև կապերը, ընդլայնել են տնտեսական և բիզնես կապերը, նպաստել են մշակութային և կրթական գործողություններին, ինչպես նաև հեշտացրել են Հայաստանում և Ադրբեջանում հավասարակշռված տեղեկատվության տարածումը:

Չի արձանագրվել կոնկրետ առաջընթաց Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման գործընթացում, թեև Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպութան շրջանակում դեկտեմբերին Երևանում տեղի է ունեցել երկու երկրների արտաքին գործերի նախարարների հանդիպումը:

3. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

Մակրոտնտեսական իրավիճակ և զարգացումներ[2]

Տնտեսական աճը 2012թ. 7.3%-ից 2013թ. նվազել է մինչև 3.2%: Սա տեղի է ունեցել մասնավոր սպառման ծավալների էական նվազման, ինչպես նաև

[2] Տվյալները վերցվել են Վիճակագրության պետական ծառայությունից, Կենտրոնական բանկից, ԱՄՀ-ից կամ Հանձնաժողովի աշխատակազմի գնահատումներից, ինչպես նշվել է վիճակագրության հավելվածում: Այն դեպքում, երբ օգտագործվել են այլ տվյալներ, նշվում են դրանց աղբյուրները:

Ռուսաստանի տնտեսական աճի դանդաղեցման և գյուղատնտեսական ավելի ցածր արդյունքների հետևանքով:

Գնաճը 2012թ. արձանագրված 2.5%-ից ավելացել է մինչև 5.8%՝ 2013թ. սննդամթերքի և էներգիայի գնի էական աճի արդյունքում: 2013թ. օգոստոսին Հայաստանի կենտրոնական բանկը իր քաղաքականության գործակիցը ավելացրել է 8%-ից մինչև 8.5%, մինչդեռ 2013թ. նոյեմբերին այս գործակիցը կազմել է նորից 8%, քանի որ մեղմացել են գնաճի ճնշումները:

Հարկաբյուջետային կոնսոլիդացիան աճել է ծախսերի նվազման և եկամուտների հավաքագրման բարելավման շնորհիվ: Չնայած տնտեսական աճի դանդաղեցմանը, հարկաբյուջետային դեֆիցիտը նվազել է՝ 2013թ. կազմելով ՀՆԱ-ի 1%-ը, 2012թ. գրանցված ՀՆԱ-ի 1.6%-ի փոխարեն: Եկամուտների մոբիլիզացման և հարկային վարչարարության բարեփոխումները կհանդիսանան հետագա հարկաբյուջետային կոնսոլիդացման ապահովման կարևոր տարրեր:

Հայաստանի խելամիտ հարկաբյուջետային քաղաքականությունը և ֆինանսավորման ցածր ծախսերը պաշտոնական վարկատուներից արտոնյալ փոխառությունների շնորհիվ ձևավորել են բարենպաստ վարկային պրոֆիլ: Սա հնարավորություն է տվել թողարկել 700 միլիոն ԱՄՆ դոլարով արտահայտված Եվրոբոնդեր՝ տարեկան 6% տոկոսադրույքով, որը նախատեսվում է մարել 2020 թվականին: Վարկը օգտագործվել է Ռուսաստանի Դաշնության կողմից 2009թ. հունիսին Հայաստանին տրամադրված 500 միլիոն ԱՄՆ դոլար արժողությամբ վարկի մարման նպատակներով: Մնացած 200 ԱՄՆ դոլարը կօգտագործվի հետևյալ երեք նպատակներով՝ (ա) խնայողություններ, (բ) վարկի տրամադրում առևտրային բանկերին մասնավոր հատվածի/փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ-ներ) ենթավարկավորում, և (գ) դեֆիցիտի ֆինանսավորում՝ նվազեցնելով կարճաժամկետ պարտատոմսերի թողարկումը 2014թ.: Այս վարկը գոյություն ունեցող պետական պարտքի մակարդակը ավելացրել է միայն մոտ երկու տոկոսային կետով (ՀՆԱ-ի 43.7%), քանի որ վերջինիս մեծ մասն օգտագործվել է 2013թ. հոկտեմբերին Ռուսաստանի Դաշնության կողմից 2009թ. հունիսին Հայաստանին տրամադրված 500 միլիոն ԱՄՆ դոլար արժողությամբ վարկի մարման համար: Անհրաժեշտ է ապահովել հարկաբյուջետային խելամիտ դիրք, հաշվի առնելով այն փաստը, որ Հայաստանը դուրս է գալիս արտոնյալ պայմաններով ֆինանսավորում ստանալու փուլից, ինչի արդյունքում կընդլայնվի շուկայական պայմաններով ֆինանսավորման հնարավորությունների ֆինանսական դիվերսիֆիկացիան:

2013թ. երկրի արտաքին դիրքը աննշան բարելավվել է, սակայն միևնույն ժամանակ մնացել է դեռևս խոցելի: Ընթացիկ հաշվի դեֆիցիտը նվազել է մինչև ՀՆԱ-ի 8.5% 2013թ.՝ 2012թ. 11.2%-ի փոխարեն, քանի որ տնտեսական գործունեության թուլացումն առաջացրել է արտահանման պահանջարկ:

Անհրաժեշտ կլինեն հարկաբյուջետային սահմանափակումներ, ինչպես նաև արտարժույթի ճկունություն և կառուցվածքային բարեփոխումներ՝ մեղմացնելու վճարային հաշվեկշռի ճնշումները և նվազեցնելու արտաքին պարտքի կուտակումները (որը ներկայումս կազմում է ՀՆԱ-ի 79%):

Սեպտեմբերին Հայաստանի կառավարությունը հայտարարել է, որ երկիրը միանում է Եվրասիական մաքսային միությանը՝ ԵՄ-ի հետ ԽՀԱԱՀ-ի ձևավորման փոխարեն: Թեև այս որոշման արդյունքում Ռուսաստանը նվազեցրել է էլեկտրաէներգիայի գինը Հայաստանի համար, երկարաժամկետ հեռանկարում ակնկալվում է, որ Հայաստանը ավելի մեծ տնտեսական և ֆինանսական կախվածություն կունենա Ռուսաստանից, ինչպես նաև կնվազի Հայաստանի դիմադրողականությունը տնտեսական շոկերի նկատմամբ: Սա կարող է իր բացասական ազդեցությունն ունենալ ԵՄ երկրներից արտաքին ուղղակի ներդրումների (ԱՈՒՆ) հոսքի վրա, ինչպես նաև կարող է ենթադրել փոխհատուցման ծախսեր, քանի որ ԱՀԿ-ի անդամ երկրները, ինչպիսին է Հայաստանը, որդեգրելու է Մաքսային միության սակագները:

Սոցիալական իրավիճակ, զբաղվածություն և աղքատության կրճատում

Գործազրկության մակարդակը 2013թ. գնահատվել է 10%, 2012էթ.[3] 9.9%-ի փոխարեն, արձանագրելով ավելի բարձր գործազրկություն քաղաքային համայնքներում:

Որպես **աղքատության** հաղթահարմանն ուղղված ջանքերի բաղադրիչ, 2013թ. կեսին ընդունվել է օրենք մասնավոր և պետական հատվածում աշխատավարձերի, ինչպես նաև նվազագույն աշխատավարձի բարձրացման մասին: Նախատեսվում է նաև ավելացնել կենսաթոշակները միջինում մոտ 15%-ով: Կենսաթոշակային նոր համակարգը ուժի մեջ է մտել 2014թ. հունվարի 1-ից, որի արդյունքում ներդրվել է պարտադիր կուտակային համակարգ: Երեխաների աղքատության մակարդակը շարունակում է մնալ բարձր, որտեղ ամենաբարձր մակարդակը զբաղեցնում են հաշմանդամություն ունեցող երեխաները: Ըստ ՄԱԿ-ի տվյալների, ծայրահեղ աղքատ ընտանիքների միայն 54.3%-ն է կանոնավոր կերպով ստանում ընտանեկան նպաստներ, ինչը մասամբ տրամադրվող օժանդակության մասին իրազեկվածության բացակայության արդյունք է:

Շարունակվել է միասնական **սոցիալական ծառայություններին** անցնելու գործընթացը, որտեղ ներգրավվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը և ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը: Նման ծառայություններ են ներդրվել Արարատի մարզում:

[3] Տվյալները վերաբերում են 15-75 տարեկան անձանց:

Ազգային զբաղվածության ռազմավարության և 2013-2018թթ. գործողությունների ծրագրի իրականացման ջանքերի շրջանակներում ընդունվել է նոր օրենք զբաղվածության մասին, որն ուժի մեջ է մտել 2014թ. հունվարի 1-ից:

Գյուղատնտեսության և համայնքային զարգացման ոլորտում շարունակվել է կայուն գյուղատնտեսության զարգացման ռազմավարության իրականացումը, որը ներառել է նաև համայնքային զարգացման բաղադրիչներ: Գյուղատնտեսության և համայնքային զարգացման եվրոպական հարևանության քաղաքականության[4] (ENPARD/ԳՀՋԵՀՔ) նախաձեռնության շրջանակում նախատեսվում է ԵՄ լայնածավալ օժանդակություն 2014թ.: Սա կներառի գյուղատնտեսության և համայնքային զարգացման միասնական ռազմավարության մշակումը:

Մեկնարկել է Հայաստանի զարգացման ռազմավարության մշակման աշխատանքները, որը պետք է փոխարիներ չգործող 2008-2020թթ. **Կայուն զարգացման ծրագրին**, սակայն գործընթացը մնացել է նախնական փուլում:

4. ԱՌԵՎՏՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԽՆԴԻՐՆԵՐ, ՇՈՒԿԱՅԻ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

2012թ. ընթացքում ԵՄ-ն շարունակել է մնալ Հայաստանի հիմնական **առևտրային** գործընկերը:[5] ԵՄ-ն շարունակել է մնալ Հայաստանի արտահանման և ներմուծման ամենամեծ շուկան Հայաստանի արտահանման և ներմուծման ընդհանուր ծավալում համապատասխանաբար 39.3% և 23.8% տեսակարար կշիռով: ԵՄ-ից Հայաստան արտահանումը հիմնականում եղել են սարքավորումներ և մեխանիկական սարքերը: Հայաստանից Եվրոպա ներմուծվել են հիմնականում ոչ թանկարժեք մետաղներ (պղինձ, երկաթ և պողպատ), ինչպես նաև հանքային օգտակար հանածոներ (հանքաքարեր և մետաղախարամ):

Հայաստանը շարունակել է օգտվել կայուն զարգացման և լավ կառավարման խթանման հատուկ մեխանիզմներից Ընդհանուր սակագնային արտոնությունների (GSP+/արտոնությունների ընդհանուր համակարգ+) ԵՄ համակարգի շրջանակներում: Նշված համակարգի շրջանակում Հայաստանից ԵՄ արտոնյալ ներմուծման ընդհանուր ծավալը աճել է՝ 2009թ. 61 միլիոն եվրոյից հասնելով մինչև 90 միլիոն եվրո՝ 2012թ.: 2013թ. Հայաստանը դիմել է 2014թ. հունվարից GSP+ արտոնություններից օգտվելու համար նոր GSP կանոնակարգի

[4] Գյուղատնտեսության և համայնքային զարգացման եվրոպական հարևանության քաղաքականություն:
[5] 2013թ. տվյալները հասանելի չէին հաշվետվության պատրաստման պահին:

շրջանակներում: Հայտի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Հայաստանը համապատասխանում է GSP+-ից օգվելու իրավունքի չափանիշներին. արդյունքում ԵՄ-ն հաստատել է դիմումը: Այսպիսով Հայաստանը շարունակում է օգտվել GSP+ համակարգից՝ վերանայված GSP համակրագի շրջանակում:

2013թ. ԵՄ-ն և Հայաստանը շարունակել են իրենց բանակցությունները ԽՀԱԱՀ-ի շուրջ: Բանակցությունների վերջին փուլը տեղի է ունեցել հուլիսին: ԽՀԱԱՀ-ին զուգահեռ Հայաստանը նաև իրականցրել է ներքին բարեփոխումներ առևտրի ոլորտում: Այնուամենայնիվ, սեպտեմբերի 3-ին Հայաստանի Հանրապետության նախագահը հայտարարել է, որ Հայաստանը միանալու է Ռուսաստանի կողմից նախաձեռնված Եվրասիական մաքսային միությանը, որն անհամատեղելի է ԽՀԱԱՀ-ի դրույթների հետ:

Հուլիս ամսին Հայաստանը վավերացրել է **Մաքսային** ընթացակարգերի պարզեցման և ներդաշնակեցման միջազգային կոնվենցիայում փոփոխություններ կատարելու մասին արձանագրությունը (Կիյոտոյի կոնվենցիա): ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (ՊԵԿ) 2013-2014թթ. մաքսային ռազմավարությունը և ՀՀ ֆինանսների նախարարության 2013-2014թթ. մաքսային ռազմավարությունը հաստատվել են նոյեմբեր ամսին: Նախքան նախագահի հայտարարությունը Հայաստանի՝ Մաքսային միությանը միանալու միտումների մասին, ՊԵԿ-ը ձևավորել էր աշխատանքային խումբ նոր Մաքսային օրենսգիրքը ԵՄ մաքսային օրենսգրքին համապատասխանեցնելու հարցերով: ԵՄ-ի մաքսային հարցերի Թվինինգ ծրագիրն օժանդակում էր Հայաստանին մաքսային վերահսկողության ընթացակարգերի մշակման և կիրարկման ուղղությամբ:

Ինչ վերաբերում է **ապրանքների ազատ տեղաշարժի և տեխնիկական կանոնակարգերի** ոլորտում կատարվող բարեփոխումներին, ԵՄ ծրագրերը ներկայացրել են առաջարկություններ ԵՄ հորիզոնական և ուղղահայաց օրենսդրության մոտարկման վերաբերյալ: Կառավարությանն է ներկայացվել համապատասխանության գնահատման ԵՄ ընթացակարգերի որդեգրման և Խաղալիքների անվտանգության մասին օրենքի նախագծերը: Քաղաքաշինության նախարարությունը պատրաստում էր օրենքի նախագիծ շինարարական աշխատանքների և շինարարական ապրանքների մասին: 2014թ. հունվարին կառավարությունը հաստատել է Շուկայի վերահսկողության մասին և Ոչ սննդային արտադրանքի ընդհանուր անվտանգության մասին օրենքների նախագծերը: Նախատեսվում է ընդունել նաև Թերի արտադրանքի համար պատասխանատվության մասին օրենքի նախագիծը: Հայաստանը մշակել և հաստատել է ընթացակարգեր՝ հարցաթերթի տեսքով, արտադրանքի երեք ոլորտներում, մասնավորապես՝ խաղալիքների անվտանգության, մաքրող նյութերի և ծխախոտի ոլորտներում: Պատրաստվում են նաև հարցաթերթեր 19 այլ ոլորտների համար:

Սանիտարական և բուսասանիտարական ոլորտում Հայաստանը շարունակել է իրականացնել Սննդամթերքի անվտանգության ապահովման գործողությունների ծրագիրը, որը հաստատվել է 2011թ., ինչպես նաև իրականացրել է իրազեկության բարձրացման միջոցառումներ: Հայաստանը հաստատել է նաև տեխնիկական վերահսկողության մեթոդաբանությունը՝ ներմուծվող սննդամթերքի ռիսկերի մակարդակի հիման վրա: Կառավարությունը նաև հաստատել է բույսերի և բուսական արտադրանքի ներմուծումն արգելող ընթացակարգերը, երբ դրանք չեն համապատասխանում բուսասանիտարական պահանջներին, ինչպես նաև ներմուծվող սննդամթերքի նկատմամբ պետական հսկողություն իրականացնելու համար: Հայաստանը սկսել է մատակարարել համապատասխան սարքավորումներ սահմանում սննդամթերքի անվտանգության ստուգման կետերի համար: Կառավարությունը օժանդակություն է խնդրել ԵՄ-ից և Սննդի և գյուղատնտեսության կազմակերպությունից (FAO)՝ սննդամթերքի անվտանգության լաբորատորիաների արդիականացման համար:

Համաձայն Համաշխարհային բանկի «Doing business-2014» վարկանիշային տարեկան հաշվետվության Հայաստանը զբաղեցրել է 37-րդ տեղը[6] (189 երկրների շարքում): Հայաստանը նաև առաջընթաց է արձանագրել բիզնես սկսելու և հարկերի վճարման ոլորտում: Սակայն Հայաստանում դեռևս կան մի շարք ոլորտներ, որոնք ազդում են գործարար միջավայրի ձևավորման վրա, և որոնք պահանջում են հետագա բարեփոխումներ: Այդ ոլորտների շարքում են կապերի ամրապնդումը, հարկերի վճարումը, էլեկտրաէներգիայի մատակարարումը և միջսահմանային առևտուրը: Հայաստանը գրավել է 79-րդ տեղը (148 երկրների շարքում)՝ ըստ Համաշխարհային տնտեսական ֆորումի «2013-2014թթ. գլոբալ մրցակցության հաշվետվության»: Հայաստանը արձանագրել է շատ ցածր վարկանիշեր այնպիսի ցուցանիշների գծով, ինչպիսիք են տեղական մրցակցության ակտիվությունը, հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետությունը, մաքսային ընթացակարգերի բեռը և արդարադատության ոլորտի անկախությունը: Գործարարությամբ զբաղվելու խնդրահարույց այլ գործոնների թվում են կոռուպցիան, ֆինանսական միջոցների հասանելիությունը, անարդյունավետ պետական բյուրոկրատիան, հարկային կարգավորումները և սակագները: Բարեփոխումներն այս ոլորտում կարող են խթանել աճը մասնավոր հատվածում, մասնավորապես ՓՄՁ-ների համար:

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին օրենքի ոլորտում Համաշխարհային բանկն իրականացրել է գնահատումներ, որի արդյունքում պարզ է դարձել, որ Միջազգային ֆինանսական հաշվետվության

[6] Համեմատվել է «Doing Business - 2013» վարկանիշային հաշվետվության հետ, որը վերանայվել է մեթոդաբանության փոփոխությունների և տվյալների ճշտման նպատակով: Լրացուցիչ տեղեկատվության համար տես http://www.doingbusiness.org:

ստանդարտները (IFRS/ՖՀՄՍ) չափազանց բարդ են փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ-ներ) համար: Հայաստանը սկսել է դիտարկել ՓՄՁ-ների հաշվետվությունների համակարգի պարզեցման հնարավորությունները: 2012թ. ՖՀՄՍ-ի միասնական ուղենիշերը (կարմիր գիրք) թարգմանվել են հայերեն: Արևելյան գործընկերության երկրներում հոկտեմբերին գործարկվել է աուդիտի և հաշվետվության համակարգերի հզորացման ծրագիրը (STAREP):

Ֆինանսական ծառայությունների ոլորտում տնտեսական մրցակցության կանոնակարգման մասին հայեցակարգից հետո (որը հաստատվել է 2012թ.) Հայաստանը մշակել է ֆինանսական ոլորտում հակամրցակցային համաձայնագրերի, ինչպես նաև ֆինանսական կազմակերպությունների համակենտրոնացումների մասին կանոնակարգեր: Մայիս ամսին ՀՀ կենտրոնական բանկը Ֆինանսական կայունության ինստիտուտի Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի բանկային վերահսկողների խմբի (BSCEE Group) օժանդակությամբ իրականացրել է եռօրյա սեմինար՝ քննարկելու Բազել III-ի հիմնական սկզբունքները: Քննարկվում են Բազել III-ի որոշ նորմերի իրականացման հնարավորությունները 2014 թվականին:

Էական փոփոխություններ չեն արձանագրվել ընկերությունների **հիմնադրման, կապիտալի շարժի և ընթացիկ վճարումների** ոլորտի օրենսդրության դաշտում:

Այլ առանցքային ոլորտներ

Հայաստանը փոխարինել է անհատական եկամտահարկը և պարտադիր սոցիալական վճարումները միասնական եկամտային հարկով: Գործողությունների ծրագրի իրականացման և բիզնես միջավայրի բարելավման նպատակով Հայաստանին խորհուրդ է իրականացնել լրացուցիչ բարեփոխումների հարկային վարչարարության ոլորտում, ինչպես նաև հարկային քաղաքականության և օրենսդրության մեջ:

Որևէ առաջընթաց չի արձանագրվել **պետական օժանդակության** հսկողության օրենսդրության իմաստով: Տնտեսական **մրցակցության** պաշտպանության մասին օրենքի փոփոխությունները ներկայացվել են կառավարությանը:

ԵՄ օժանդակությամբ Հայաստանը գործարկել է **Մտավոր սեփականության իրավունքի** (ՄՍԻ) կիրարկման տեղեկատվական կենտրոն և վերջինիս ինտերնետային կայքում հրապարակել է վիճակագրական տեղեկատվություն ՄՍԻ խախտումների մասին 2011-2012թթ. համար: Կառավարությունը պատրաստել է առաջարկություններ ՄՍԻ կիրարկման համապատասխան օրենքներում փոփոխություններ կատարելու մասին: Հեղինակային իրավունքի մասին օրենքը վերանայվել է կառավարության կողմից: Սեպտեմբեր ամսին Հայաստանը վավերացրել է Արտոնագրային իրավունքի մասին և Ապրանքային

նշանների իրավունքի մասին պայմանագրերը: Բույսերի նոր տեսակների պաշտպանության մասին միջազգային կոնվենցիայի վավերացումը դեռևս ընթացքի մեջ է: Գործողությունների ծրագրի իրականացումն ապահովելու նպատակով Հայաստանը պետք է վերջնականացնի կիրարկման իրավական շրջանակը և զարգացնի ՄՄԻ ստորաբաժանումների կարողությունները մաքսային մարմնում և ոստիկանությունում, ինչպես նաև ներդնի աշխարհագրական նշումների համակարգ:

Հակակոռուպցիոն ոլորտի հետ միասին դանդաղ են ընթանում նաև բարեփոխումները **գնումների** ոլորտում: Մարտ ամսին հրապարակված Առևտրաարդյունաբերական պալատի 2012թ. հաշվետվության մեջ նշվել է գնումների գործընթացի համակարգային խնդիրների մասին: Գնումների համակարգում լայն տարածում ունի տեխնիկական և ֆինանսական անարդյունավետությունը: Ավելին, էլեկտրոնային գնումների համակարգի ներդրումը դեռևս չի ավարտվել: Ոլորտում թերությունները հասցեագրելու նպատակով Հայաստանը ներկայումս մշակում է էլեկտրոնային գնումների համակարգի բարեփոխումների նոր նախաձեռնություն 2013-2015թթ. համար:

Վիճակագրության ոլորտում 2013թ. նոյեմբերին Հայաստանն իրականացրել է պիլոտային գյուղատնտեսական հետազոտություն, իսկ 2014թ. նախատեսվում է իրականացնել ամբողջական հետազոտություն: Հայաստանը հրապարակել է 2011թ. բնակչության մարդահամարի արդյունքները և մշակել է նաև, օգտագործողի համար ավելի հարմար տվյալների բազա: Պատրաստվել և հրապարակվել են որակի հայտարարություններ բոլոր վիճակագրական պրոդուկտների համար: Մեկնարկել է վիճակագրության մասին օրենսդրության վերանայման աշխատանքները: Գործողությունների ծրագրի իրականացման հետագա առաջընթաց արձանագրելու նպատակով Հայաստանը պետք է շարունակի բարեփոխումների իր գործընթացը տեղեկատվության տարածման, ժողովրդագրական, աշխատանքային շուկայի, աղքատության, շրջական միջավայրի և այլ վիճակագրական ոլորտներում:

Պետական ֆինանսական կառավարման համակարգերը շարունակել են բարեփոխվել 2013թ.: Իրականացված միջոցառումների թվում են եկամտային հարկի նոր մոդելը, որը կապված է ընթացող կենսաթոշակային բարեփոխումների հետ, հարկերին առնչվող ցուցանիշների մշակումը, Բյուջետային համակարգի մասին նոր օրենքի ընդունումը, ինչպես նաև ներքին աուդիտի աշխատակիցների վերապատրաստումը: Իրականացվել է Պետական ծախսերի և ֆինանսական հաշվետվողականության (ՊԾՖՀ) ինքնագնահատում: Պատրաստվել է **պետական ֆինանսական ներքին հսկողության** ոլորտում Թվինինգ ծրագիր: ՀՀ ֆինանսների նախարարության Պետական պարտքի կառավարման վարչությունը ստացել է ԵՄ օժանդակություն՝ հզորացնելու նոր ձևավորված գործառույթների վրա հիմնված կառուցվածքը: Գործողությունների

ծրագրի ծրագրային բյուջետավորման բարեփոխումներին առնչվող միջոցառումների ոլորտում արձանագրվել են սահմանափակ զարգացումներ՝ Բյուջետային համակարգի մասին նոր օրենքի հաստատման հետաձգումների հետ կապված: Հետաձգվել է ոչ առևտրային կազմակերպությունների ֆիդուցիար հսկողության բարելավման մասին առաջարկությունների իրականացումը: **Արտաքին աուդիտի** ոլորտի բարեփոխումները չեն արձանագրել էական առաջընթաց, թեև այդ ոլորտում տրամադրվել է օժանդակություն ԵՄ-ի և այլ դոնորներն կողմից: Հաշվետվողականության և թափանցիկության ապահովման համար անհրաժեշտ է ներգրավել ոչ պետական ոլորտի դերակատարներին բյուջետավորման գործընթացում:

Եվրոպայի փոքր բիզնեսի ակտի իրականացման մասին հաշվետվությունը (SBA), որը հրապարակվել է 2012թ. հոկտեմբերին, եզրակացրել է, որ թեև ոլորտում գրանցվել են որոշ բարեփոխումներ, **փոքր և միջին ձեռնարկատիրության** (ՓՄՁ) ոլորտին դեռևս անհրաժեշտ են հզոր և կենսունակ զարգացման ռազմավարություն և քաղաքականության իրականացման արդյունավետ մեխանիզմներ: Հիմնական գերակա ոլորտներն են ՓՄՁ ֆինանսավորումը, նորարարությունը և արտահանման խթանումը: Ժամանակի ընթացքում արձանագրված առաջընթացը (2012-2015 ժամանակահատվածի համար) կվերանայվի ՓԲԱ-ի գնահատման երկրորդ փուլում: Հայաստանը նաև պարտավորվել է մասնակցել դրան հաջորդող ծրագրում, որն ուղղված կլինի կոնկրետ ոլորտների համար ներկայացված առաջարկությունների իրականացմանը՝ դրանց մրցունակությունն ապահովելու համար:

ԵՄ-ն շարունակել է տրամադրել օժանդակություն առևտրի ոլորտի բարեփոխումների համար բյուջետային օժանդակության, բարձր մակարդակի խորհրդատվության, տեխնիկական օժանդակության, Թայեքս և Թվինինգ ծրագրերի միջոցով: Ամեն դեպքում, Հայաստանի կողմից Մաքսային միությանը միանալու հայտարարությունից հետո կրճատվել է առևտրի ոլորտի օժանդակության պորտֆելը:

5. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Բագրատաշենի, Բավրայի և Գոգավանի Հայաստան-Վրաստան սահմանային անցակետերի արդիականացման առաջին շինարարական աշխատանքները պաշտոնապես մեկնարկել են սեպտեմբեր ամսին: ԵՄ-ն տրամադրվել է էական օժանդակություն **սահմանների միասնական կառավարման** այս մեծ ծրագրի համար: 2014թ. հունվարից ազգային նույնականացման քարտերը դարձել են պարտադիր Հայաստանում:

Շարունակվել են ԵՄ-Հայաստան **Շարժունակության գործընկերության** ՀՀ **միգրացիայի** պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012-2016թթ. գործողությունների ծրագրի իրականացման աշխատանքները: Արդյունքում ներդրվել է մեկ պատուհանի սկզբունքով ծառայությունները Հայաստան վերադարձող միգրանտների համար՝ ապահովելով հստակ մեկ միասնական մուտքի ուղղորդման մեխանիզմով, գործող վերաինտեգրման օժանդակության համար, ինչպես նաև մեկնարկել է հմտությունների վրա հիմնված աշխատանքային հարթակը՝ ուղղված աշխատանք որոնողներին, ովքեր ցանկանում են դառնալ շրջանաձև միգրանտներ, ինչպես նաև ԵՄ աշխատողների համար, ում ցանկանում են համալրել արտերկներից: ԵՄ-ն տրամադրել է օժանդակություն միգրացիայի կառավարման և վերաինտեգրման համար Թվինինգ և այլ ծրագրերի միջոցով:

Ապրիլին ստորագրվել է ԵՄ-Հայաստան **Ռեադմիսիայի համաձայնագիրը**: Համաձայնագիրը նոյեմբեր ամսին վավերացվել է ՀՀ ազգային ժողովի կողմից, արդեն ստորագրված **Մուտքի արտոնագրերի դյուրացման համաձայնագրի հետ միասին**: Երկու համաձայնագրերն ուժի մեջ են մտել 2014թ. հունվարի 1-ին:

2013թ. վերջին Միգրացիոն պետական ծառայությունը Ռումինիայի գործընկերների օժանդակությամբ փոփոխություններ է կատարել **Փախստականների և ապաստանի մասին օրենքում**՝ ապաստան որոնողների համար ժամանակավոր ընդունելության կենտրոնի ստեղծման ստանդարտ գործառնական ընթացակարգերի տեսքով: Ապաստան որոնողների համար անվճար իրավաբանական օգնության հնարավորության բացակայությունը շարունակում է մնալ մտահոգիչ խնդիր: Մինչդեռ Սիրիայի փախստականների հոսքը գնալով աճում է: 2013թ. Հունվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում ապաստան որոնող 327 հոգուց 285-ը եղել են Սիրիայից: Սիրիայի ապաստան որոնողները օգտվում են պարզեցված ընթացակարգերից, սակայն անհրաժեշտ է ապահովել համապատասխան թափանցիկություն և հաշվետվողականություն: Հակամարտության սկզբից ի վեր Սիրիայից Հայաստան եկած մարդկանց ընդհանուր թիվը կազմել է ավել քան 11000 հոգի, որոնց մեծ մասը դիմել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիության կամ կացության թույլտվության համար, ապաստանի փոխարեն:

Առաջընթաց է արձանագրվել **մարդկանց շահագործման** խնդիրների հասցեագրման ոլորտում: Կառավարությունը հաստատել է Թրաֆիքինգի դեմ պայքարի 2013-2015թթ. ազգային ծրագիրն՝ ուղղված դրանց բացահայտման և թրաֆիքինգի զոհերի աջակցության մեխանիզմների բարելավմանն իրավական բարեփոխումների, ինչպես նաև ֆինանսական և կարողությունների զարգացման ջանքերի միջոցով:

Շարունակվել են ԵՄ օժանդակությամբ **կիբերհանցագործության** ոլորտում իրականացվող գործողությունները:

Ինչ վերաբերում է թմրամիջոցների դեմ պայքարին, մեկնարկել են Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ռազմավարության նախագծի մշակման աշխատանքները 2013թ. սկսած, սակայն փաստաթուղթը դեռևս չի հաստատվել: Ի պատասխան մայիս ամսին Հայաստանի կողմից ներկայացված խնդրանքի, Թմրամոլության և թմրամիջոցների մոնիտորինգի եվրոպական կենտրոնի (ԹԹԵՄԿ) հետ կնքվել է Փոխըմբռնման հուշագիր, ներկայումս իրականացվում են անհրաժեշտ քայլեր այդ ուղղությամբ: Հայաստանը նշանակել է ԹԹԵՄԿ ազգային միջնորդ:

Մտահոգություններ կան՝ կապված Տվյալների պաշտպանության մասին օրենքի նախագծի հետ. Ոստիկանության և անվտանգության ծառայության նշանակումը որպես վերահսկիչ մարմին չի համապատասխանում ԵՄ ստանդարտների պահանջներին՝ հիմնականում անկախության ապահովման պահանջի իմաստով:

Ինչ վերաբերում է **արդարադատության ոլորտի համագործակցությանը** քաղաքացիական հարցերի ոլորտում, 1965թ, Հաագայի կոնվենցիան արտերկրներում քաղաքացիական և առևտրային գործերով դատական և արտադատական փաստաթղերի հանձնման մասին Հայաստանում ուժի մեջ է մտել փետրվար ամսին:

6. ՏՐԱՆՍՊՈՐՏ, ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ, ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ, ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Ազգային ավիափոխադրողի սննանկ ճանաչվելուց հետո հունիս ամսին կառավարությունը հաստատել է երկրի օդային տրանսպորտի ոլորտի ազատականացման հայեցակարգը: Հայաստանը արտահայտել է իր պատրաստակամությունը բանակցություններ սկսելու ԵՄ-ի հետ Միասնական ավիացիոն տարածքի ստեղծման շուրջ: Մայիսի 14-ին կառավարությունը ստորագրել է աշխատանքային համաձայնագիր Եվրոպական ավիացիոն անվտանգության գործակալության հետ՝ քաղաքացիական ավիացիայի անվտանգության կանոնակարգման բոլոր ասպեկտների ուղղությամբ համագործակցության մասին:

Արձանագրվել է առաջընթաց հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի շինարարական աշխատանքների ուղղությամբ, որին օժանդակում է ԵՄ-ն Հարևանության ներդրումային գործիքի միջոցով: Հայաստանը դեռևս պետք է միանա Վտանգավոր ապրանքների ցամաքային ճանապարհով միջազգային

փոխադրման մասին եվրոպական համաձայնագրին (ADR): Մայիս ամսին Հայաստանը միացել է Դեպի ծով ելք չունեցող պետությունների տարանցիկ առևտրի մասին կոնվենցիային, ինչպես նաև Տարանցիկ փոխադրման ազատության կանոնակարգին:

Շարունակվել է **Էներգախնայողության** և վերականգնվող էներգետիկայի 2010թ. գործողությունների ծրագրի և Էներգիայի արդյունավետության 2011թ. ճանապարհային քարտեզի իրականացումը: Հայաստանը նախատեսում է մինչև 2025թ. ապահովել էներգիայի արտադրության 30%-ը վերականգնվող ռեսուրսներից: Քանի որ երկիրը համարում է, որ արևային էներգիայի տեխնոլոգիաների ծախսերը չափազանց մեծ են, ավել մեծ ուշադրություն է հատկացվում հիդրոէներգետիկայի և քամուց ստացվող էլեկտրաէներգիայի ոլորտներին: Հայաստանը մասնակցել է ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող ԻՆՈԳԵՅԹ ծրագրին, որը երկրին տրամադրում է տեխնիկական օժանդակություն էլեկտրաէներգիայի և գազի ստանդարտների և սակագների ոլորտում, ինչպես նաև էներգիայի կայուն աղբյուրների զարգացման ուղղությամբ: ԵՄ օժանդակությամբ իրականացվել են սթրես թեստերը Մեծամորի ատոմային կայանում, որոնց արդյունքները ներկայացվել են հոկտեմբեր ամսին: Դրանք ակնկալվում է ուսումնասիրել գործընկեր փորձագետների կողմից: Չեն իրականացվել քայլեր էլեկտրաէներգիայի շուկայի ազատականացման ուղղությամբ:

2013թ. մեկնարկել են կլիմայի փոփոխությանը վերաբերող ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող նոր ծրագրեր, այդ թվում՝ Clima East պիլոտային ծրագիրը և «Կլիմայի արևելյան հարթակ» ծրագիրը:

Շրջակա միջավայրի կառավարման հետ կապված չի արձանագրվել որևէ առաջընթաց: Չեն եղել էական զարգացումներ շրջակա միջավայրի վատթարացումը կանխարգելող օրենսդրության ապահովման դաշտում: Ինչ վերաբերում է բնական պաշարներին, հիմնական փոփոխությունը եղել է այն, որ անտառային տնտեսության վարչական պատասխանատվությունը փոխանցվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը: Հայաստանը մասնակցել է ԵՄ ջրային նախաձեռնության Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի բաղադրիչին, ինչպես նաև անդրսահմանային ջրային ռեսուրսների կառավարման բոլոր ծրագրերին:

Աղետների ռիսկերի նվազեցման և **քաղաքացիական պաշտպանության** ոլորտում շարունակվել են կարողությունների զարգացման միջոցառումները ԵՄ օժանդակությամբ՝ ուղղված ազգային հարթակին, համապատասխան նորարարություններին, խոցելի խմբերին, այդ թվում՝ հաշմանդամ երեխաներին:

Ինչ վերաբերում է **տեղեկատվական հասարակությանը**, հոկտեմբերին Երևանում՝ Հանրային ծառայությունների կարգավորման հանձնաժողովում (ՀԾԿՀ) տեղի է ունեցել ԱլԳ էլեկտրոնային հաղորդակցության միջոցների կարգավորողների ցանցի երկրորդ հանդիպումը: Սեպտեմբեր ամսին Տրանսպորտի և կապի նախարարությունը հաստատել է Հայաստանում էլեկտրոնային առևտրի զարգացման ծրագիրը և իրականացման ժամանակացույցը: Ներդրվել է ճանապարհային երթևեկության խախտումների տուգանքների և վարորդական իրավունքի էլեկտրոնային ոստիկանության համակարգ, ինչպես նաև քաղաքացիական կարգավիճակի գրանցման էլեկտրոնային քաղաքացիական բաղադրիչը և նույնականացման քարտերի էլեկտրոնային նույնականացման համակարգը:

Տեսալսողական քաղաքականության ոլորտում Հայաստանի հեռարձակման օրենսդրությունը չի համապատասխանում Եվրոպայի Խորհրդի և ԵԱՀԿ-ի ստանդարտներին և առաջարկություններին, քանի որ այն չի ապահովում տարակարծությունը հեռարձակվող զանգվածային լրատվական միջոցներում:

Հետազոտությունը և նորարարությունը եղել են Սևծովյան տնտեսական համագործակցության Հայաստանի նախագահության հիմնական գերակայությունների շարքում հուլիս-դեկտեմբեր ամիսներին: Հայաստանը մեծացրել է իր մասնակցությունը (FP7)՝ 45 ծրագրերում, որոնց ընդհանուր ներդրումը կազմում է 3.22 միլիոն եվրո: Մեկնարկել են երեք FP7 ծրագրեր (R2I-Հետազոտությունից նորարարություն)՝ Հայաստանի շահառուների մասնակցությամբ: Ծրագրերին օժանդակում է ԵՄ-ո՝ տրամադրելով 3 միլիոն եվրո, որն ուղղված կլինի հետազոտություններ-արդյունաբերություն գործընկերությանը, ինչը կօգնի Հայաստանին զարգացնել իր կարողությունները նորարարության ոլորտում և կհեշտացնի հետազոտությունների արդյունքների կոմերցիոն օգտագործումը: Սեպտեմբեր ամսին մեկնարկել է FP7 տարածաշրջանային եռամյա ծրագիրը, INCONET EaP-ն՝ Գիտությունների ազգային ակադեմիայի մասնակցությամբ՝ ուղղված Հորիզոն 2020-ին անցնելու նախապատրաստական աշխատանքներին, ինչպես նաև ծրագրի կողմից տրամադրվող համագործակցության հնարավորությունների խթանմանը: Հայաստանը պաշտոնապես հաստատել է իր հետաքրքրվածությունը Հորիզոն-2020-ին անդամակցելու վերաբերյալ:

7. ՄԱՐԴԿԱՆՑ ՄԻՋԵՎ ԿԱՊԵՐ (PEOPLE_TO PEOPLE CONTACTS), ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

2011թ. հունիսին հաստատվել է Կրթության զարգացման 2011-2015թթ. պետական ծրագիրը, որը ներկայումս հանդիսանում է ռազմավարական նպատակների, խնդիրների և ցուցանիշների ուղենիշ:

Մեկնարկել են Կրթության մասին օրենքի վերանայման աշխատանքները: Կառավարությունy նախատեսվում է երկարացնել պարտադիր կրթության ժամկետը 2014թ. դրությամբ 9 տարուց մինչև 12 տարի՝ տարեկան միջնակարգ կրթություն չստացող միջինում 4000 աշակերտների խնդիրը հասցեագրելու նպատակով:

Համապատասխան պետական մարմինների, ՀԿ-ների և սոցիալական գործընկեր կազմակերպությունների հետ խորհրդակցության արդյունքում Կրթության և գիտության նախարարությունը 2012թ. դեկտեմբերին հաստատել է Լրացուցիչ և շարունակական կրթության 2013-2017թթ. ռազմավարությունը: Այս ռազմավարությունը ներառում է առաջարկություններ Լրացուցիչ և շարունակական կրթության ռազմավարության վերաբերյալ օրենսդրության մեջ փոփոխություններ կատարելու մասին, այդ թվում՝ ոչ պաշտոնական և պաշտոնական ուսուցման վավերացման նոր հասկացությունները և ընթացակարգերը:

Դրական զարգացումներ են արձանագրվել **բարձրագույն կրթության** բարեփոխումների ոլորտում: Հիմնական ձեռքբերումներից մեկը Որակավորումների ազգային շրջանակի մշակումն է: Հայաստանն ստանձնել է Բոլոնիայի և BFUG (Բոլոնիայի գործընթացի վերահսկող խմբի) քարտուղարությունները 2012-2015 թվականների համար, ինչպես նաև սեպտեմբեր ամսին կազմակերպել է Ոչ պաշտոնական Արևելյան գործընկերության երկխոսության կրթության ոլորտի նախարարական հանդիպում: Այն նաև կհյուրընկալի 2015թ. նախարարական գագաթաժողովը: Քայլեր են ձեռնարկվել ուսանողներին տրամադրվող ֆինանսական օժանդակության մեխանիզմների և բարձրագույն կրթության ֆինանսավորման բարելավված համակարգի մշակման ուղղությամբ:

Հայաստանն ավելի ակտիվորե ներգրավվել է **Տեմպուս** ծրագրում, որի շրջանակներում գործում են ընդհանուր առմամբ 40 ծրագրեր: Դրանցից 18-ը համակարգվում են հայաստանյան հաստատության կողմից, որոնք ընտրվել են 2013թ: Հայաստանի ուսանողները և աշխատակազմի անդամները ստացել են 196 կրթաթոշակ՝ եվրոպական բարձրագույն կրթության հաստատություններում սովորելու համար, **Էրազմուս Մունդուս** գործընկերությունների շրջանակում: Բացի այդ 20 ուսանողների տրամադրվել է կրթաթոշակներ Էրազմուս Մունդուս-ի գերազանցության համատեղ մագիստրոսի կուրսեր անցնելու համար: Սա ներառել է նաև 20 լրացուցիչ կրթաթոշակներ, որոնք տրամադրվել են ԱլԳ երկրների համար հատուկ պատուհանի շրջանակում: 2007թ. ի վեր 11 հաստատություններ և 21 անհատ հետազոտողներ օգտվել են **Մարի Կյուրի գործողություններից**՝ ուղղված հետազոտների վերապատրաստման օժանդակությանը, շարժունակությանը և կարիերայի զարգացմանը:

ԵՄ օժանդակությամբ շարունակվել են մասնագիտական կրթության և վերապատրաստման (ՄԿՎ) բարեփոխումները՝ համաձայն Բարեփոխումների ծրագրի և 2012-2015թթ. գործողությունների ծրագրի նպատակների, հիմնական ոլորտային օժանդակության ծրագրի շրջանակներում: Էական ձեռքբերումներ և դրական ազդեցություն է արձանագրվել, մասնավորապես, ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման մակարդակում, ինչպես նաև մասնագիտական կրթության ոլորտում տեղական/տարածաշրջանային մակարդակում վերապատրաստման և զբաղվածության առաջարկի և պահանջարկի միջև կապ ձևավորելու ուղղությամբ: Լրացուցիչ ԵՄ օժանդակություն կտրամադրվի հատուկ կարիքներով երիտասարդների մասնագիտական կրթության մեջ ներգրավելու և վերջինիս մատչելիությունը նրանց համար ապահովելու, ինչպես նաև համակարգի մնացած հատվածով ընդլայնելու համար:

Հայաստանը պաշտոնապես միացել է '**eTwinning plus**' նախաձեռնությանը դպրոցների համար՝ ուղղված դպրոցների համագործակցությանը տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների միջոցով: Մինչ այժմ այս ծրագրերում ներգրավված են 41 դպրոցներ և 208 ուսուցիչներ:

Հայաստանի երիտասարդությունը և երիտասարդական կազմակերպությունները շարունակել են մասնակցել **Երիտասարդությունը շարժման** մեջ ծրագրում: 2013թ. լրացուցիչ միջոցներ են տրամադրվել ծրագրին Արևելյան գործընկերության երիտասարդության պատուհան ձևաչափով: 2013թ. ընտրվել են 425 ծրագրեր, որոնց շրջանակում ներգրավվել են 1212 ՀՀ քաղաքացիներ:

ԱլԳ մշակույթի բաղադրիչի շրջանակում Հայաստանում իրականացվում է 15 տարածաշրջանային ծրագիր՝ ուղղված մշակույթի ոլորտի կարողությունների և դերի հզորացմանը՝ տարածաշրջանային համագործակցության զարգացման միջոցով: Մշակույթի ոլորտի շահառուների մասնակցությամբ տեղի է ունեցել աշխատանքային սեմինար ԵՄ արտաքին հարաբերությունների մշակույթի ոլորտում նախապատրաստական գործողությունների խորհրդակցությունների գործընթացի համատեքստում: Օգոստոսին Երևանում անցկացվել են Եվրոպական ժառանգության օրերը (Եվրոպական հանձնաժողովի և Եվրոպայի Խորհրդի համատեղ ջանքերով) Եվրոպայի Խորհրդի նախարարների խորհրդի՝ Հայաստանի նախագահության համատեքստում:

Հայաստանն ակտիվորեն ներգրավվել է **միջսահմանային համագործակցության** մեջ Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության միջոցով, ինչպես նաև 2013թ. երկրորդ կեսին նախագահությամբ: Նախարարների հանդիպումը տեղի է ունեցել Երևանում: Բացի այդ, Սևծովյան ավազանի համատեղ գործառնական ծրագրի շրջանակում Հայաստանում մեկնարկել են մի

քանի միջսահմանային ծրագրեր տուրիզմի, շրջակա միջավայրի և մշակույթի ոլորտներում:

Երկու ամիսը մեկ ԵՄ պատվիրակությունը կազմակերպում է հանդիպումներ **քաղաքացիական հասարակության** հետ համագործակցության համար, ինչպես նաև վարում է քաղաքացիական հասարակության հետ խորհրդակցությունների ինտերնետային կայք:

Ինչ վերաբերում է **առողջապահության** ոլորտին, մշակվել է Առողջապահության քաղաքականության փաստաթուղթ, ինչպես նաև ընդունվել են մի քանի որոշումներ համաճարակային վերահսկողության և վերլուծության մասին: ԵՄ օժանդակությամբ իրականացվել է ՄԻԱՎ/ՁԻԱՎ-ի թեստավորման և կանխարգելման մասին տեղեկատվական արշավներ: Վարակիչ հիվանդությունների կանխարգելման և վերահսկողության մասին ԵՄ օրենսդրության մասին տարբեր երկրների մասնակցությամբ ԵՄ աշխատանքային քննարկմանը մասնակցել են նաև քաղաքականության մշակմամբ զբաղվող ներկայացուցիչներ Հայաստանից: